

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ»
Դրամաշնորհի N	Լոտ 6. Երևան - Նոր Նորք և Նորք Մարաշ
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.-31.12.2022թթ.
Հաշվետու ժամանակահատված	01.01.-31.03.2022թթ.
Ներկայացման օր	08.04.2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,
- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- Ըստ անհրաժեշտության՝ լվացքի և բաղնիքի ծառայության տրամադրման կազմակերպում:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

- Սոցիալական աջակցության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 107 կարիքի գնահատում և վերագնահատում: Իրականացված աշխատանքներն ուղղված են եղել շահառուների ակտիվացմանը, կյանքի որակի բարելավմանը, իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ու սոցիալական հիմնախնդիրների լուծմանը: Սոցիալական աշխատողի կողմից կենտրոնում իրականացված ընդունելությունների, անհրաժեշտության դեպքում նաև տունայցերի միջոցով անհատական և խմբային աշխատանքների արդյունքում մասնագիտական աջակցություն է տրամադրվել թվով 107 շահառուի՝ ներառյալ 5 դեպքի վարման իրականացում (ընտանեկան նպաստի համակարգում վերափաստագրում, պետ պատվերի շրջանակներում բուժհետազոտության և ստացիոնար բուժման կազմակերպում), 4 ուղղորդում, 2 միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Հոգեբանական աջակցության շրջանակում 5 շահառուի տրամադրվել է անհատական հոգեբանական խորհրդատվություն: Անհատական հոգեբանական աշխատանքն ուղղված է եղել շահառուների հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայության ձևավորմանը և/կամ հոյզերի կառավարմանը, պահպանմանը և այլն: 12 խմբային հոգեբանական աշխատանքներ են կատարվել, որոնց մասնակցել է 15 շահառու:
- Իրավական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների մասին:
- Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում բուժքրոջ կողմից իրականացվել է թվով 91 շահառուի ընդունելության կազմակերպում, որից 8 շահառուի ուղղորդում բժշկական այլ հաստատություններ: Բժշկական աջակցության շրջանակներում

շարունակաբար իրականացվում է շահառուների առողջական վիճակին հետևում, առողջ ապրելակերպի խթանում շահառուների շրջանում:

- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, հիշողության ամրապնդմանն ուղղված խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
- Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակներ.
 - ✓ գրական,
 - ✓ երգի,
 - ✓ առողջ ապրելակերպի,
 - ✓ հիշողության պահպանման ու առողջ ծերացման,
 - ✓ կարի խմբակներ),որոնց մասնակցել են 38 շահառու:
- Կազմակերպվել է թվով 10 մշակութային միջոցառում ցերեկային կենտրոնում.
 - ✓ Հին նոր տարվա նշում,
 - ✓ Բանակի օրվան նվիրված միջոցառում,
 - ✓ Տյառնընդառաջի տոնին նվիրված միջոցառում,
 - ✓ Վարդանանց տոնի նշում,
 - ✓ Կանանց միջազգային օրվան նվիրված երկու միջոցառում,
 - ✓ ծննդյան օրերիը նշելու համար երեք միջոցառումներ,
 - ✓ 2 շահառուների ամուսնության

Կենտրոնից դուրս թվով 7 համերգների մասնակցություն, այդ թվում՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կամերային երգչախմբի եւ Ա. Խաչատրյանի համերգային դահլիճում Հայաստանի պետական սիմֆոնիկ եւ ազգային ֆիլարմոնիկ նվագախմբերի, Պարի պետական անսամբլի և Մարտի 8-ին կանաց միջազգային օրվա առթիվ տոնական համերգները:

Միջոցառումներին մասնակցել են 50 շահառու:

- Կենտրոնում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, սուրճ և քաղցրավենիք:
- Հաշվետու ժամանակահատվածում 17-ը շահառու օգտվել է բաղնիքի տրամադրման ծառայությունից:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում Նոր Նորքի ցերեկային կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրվել են կենտրոնի առօրյան ներկայացնող նյութեր, որոնցից ներկայացնում ենք 9-ը

Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառումը ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1154376342039045&id=408240719985948), կենտրոնում շահառուների ամուսնության ու ծննդյան միջոցառումների նշումը (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/408240719985948/videos/652778609260684/>),

Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառում էին կազմակերպել Նոր Նորքի ցերեկային կենտրոնի գեղեցիկ սեռի շահառուները (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/408240719985948/videos/676741476969145/>)

Կանանց միջազգային օրվա առիթով Երևանի քաղաքապետարան / Yerevan Municipality-ը հաճելի անակնկալ էր մատուցել մեր շահառուներին՝ տրամադրելով տոնական միջոցառումների հրավիրատուներ (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/MissionArmenia/posts/2898081677159165>)

Նոր-Նորք ցերեկային կենտրոնում նշեցինք երկու առիթ՝ Նոր ընտանիքի ձևավորում և ծննդյան տարեդարձ (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1181965082613504&id=408240719985948)

Հոգեբանի անկյունում <Հոյզերի կառավարում> թեմայով աշխատանքների իրականացում (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1182139919262687&id=408240719985948)

Գրական խմբակի ղեկավար՝ Ծաղկանուշն այսօր վիկտորինա էր կազմակերպել (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1185790542230958&id=408240719985948)

Կարևորելով ֆիզիկական ակտիվությունը (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1185800178896661&id=408240719985948)

Պարի պետական անսամբլի համերգը նվիրված Ֆլորա Մարտիրոսյանի հիշատակին (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1190350951774917&id=408240719985948)

Անգամ փոքր ֆիզիկական ակտիվությունը դրական ազդեցություն է ունենում տարեցների կյանքում (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=1192803041529708&id=408240719985948)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Նոր Նորքի ցերեկային կենտրոնը բախվել է ուղեգրման ընթացքում առաջ եկած խնդիրներին՝ պոլիկլինիկաներում ու հոգեբուժարանում բժշկական քարտի լրացման հետ կապված: Կենտրոնում շահառուների հաճախակի այցելելություններին խոչընդոտում էին եղանակային պայմանները, ճանապարհների դժվարանցանելիությունը, նաեւ կորոնավիրուսով վարակվելու մտավախությունը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,
- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- Ըստ անհրաժեշտության՝ լվացքի և բաղնիքի ծառայության տրամադրման կազմակերպում:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Նոր Նորքի ցերեկային կենտրոնի ողջ անձնակազմը մասնակցել է «Հոգեկան առողջության խնդիրները՝ որպես սոցիալ-առողջապահական ոլորտի մարտահրավեր» կարողությունների զարգացման երկու հանդիպումներին:

Նոր Նորքի ցերեկային կենտրոնի անձնակազմը համագործակցել է Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանի հետ, արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել ամռան ամիսներին տրամադրել ավտոբուսներ էքսկուրսիաների համար:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
<div><div></div><div>Ս.Մուրադյան</div><div>Կ. Տ.</div></div>	<div><div></div><div>Ե.Մխիթարյան</div><div>Կ. Տ.</div></div>
<div><div></div><div>(ստորագրություն)</div></div>	<div><div></div><div>(ստորագրություն)</div></div>